«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<Կարպետագործություն>>

ԱՌԱՐԿԱ՝ Տեխնոլոգիա

ՀԵՂԻՆԱԿ՝ Հայկանուշ Գրիգորյան

ՄԱՐԶ՝ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ <<Ծաղկալանջի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Բովանդակություն

Կարպետագործության և գորգագործության ակունքները....3

Կարպետ/գորգ բառի ծագումնաբանությունը....3

Կարպետանախշերի ծագումը և գաղափարական բովանդակությունը....6

Կարպետների տեսակները....7

Օգտագործվող նյութերն ու գործիքները....9

Կարպետ գործելու տեխնիկան/քայլաշարը....11

Հայկական գորգը կերպարվեստում....13

Գորգագործությունն այսօր....13

Եզրակացություն....14

Օգտագործված գրականության ցանկ....15

Կարպետագործության և գորգագործության ակունքները

Հայ ժողովրդի արվեստը սկիզբ է առնում հազարամյակների խորքից: Սակայն հայկական արվեստն իր տոհմիկ նկարագրությունը ստացավ դասական միջնադարում գրականության, նկարչության, ճարտարապետության, կիրառական արվեստի զարգացման շնորհիվ: Այս շարքում իրենց առանձնակի տեղն ունեն կարպետագործությունն ու գորգագործությունը: Հայոց մշակութային համակարգի կարևոր և ավանդական բնագավառների մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում գորգագործության մշակույթը: Հայաստանում գորգագործությունն իբրև արվեստ զարգացած է եղել դեռևս վաղնջական ժամանակներից: Այդ մասին են վկայում Արենի 1 քարանձավում գտնված գործվածքներ: Ք.Ա 5 դարի թվագրվող Պազիրիկ գորգը, որի որդան կարմիրով ներկված լինելն արդեն ապացուցված է գիտնականների, մասնավորապես Ռուդենկոյի կողմից:

Պատմական Հայաստանում գորգերն ու կարպետները համարվում էին առաջին անհրաժեշտության իրեր: Դրանք փռում էին հատակին, կախում պատերին, օգտագործում որպես ծածկոց: Գորգը հայ աղջիկների օժիտի անբաժանելի մասն էր, ուստի վաղ հասակից, նրանք սովորում էին այս արհեստն ու գործում իրենց օժիտի գորգերը:

Գորգագործական արհեստն իր ողջ պատմության ընթացքում տուժել է արշավանքների, պատերազմների, հարևան երկների նվաճողական քաղաքակության արդյունքում: Պատմական Հայաստանի արշխարհաքաղաքական վայրիվերումների պատճառով եկեղեցական հավաքածուները պարբերաբար թալանվել, երբեմն հարկ է եղել դրանց մի մասը նվիրաբերել փրկելու եկեղեցիները թալանից ու ավերումից: Ցեղասպանության ընթացքում բազմաթիվ գորգեր կորսվել են: Դրանց մի մասը վաճառվել է շուկաներում՝ ի վերջո հայտնվելով Արևմուտքում որոշ անհատների հաքաքածուներում: Այնուհանդերձ Հայաստանում գորգագործությունը ոչ միայն ծիլեր է տվել, այլև տնտեսական և մշակութային կարևոր նշանակությու ձեռք բերել:

Կարպետ/գորգ բառի ծագումնաբանությունը

Հայերենում գորգ և կարպետ բառերն օգտագործվում են որպես հոմանիշ բառեր՝ միայն այն տարբերությամբ, որ գորգերն ունենում են թելախավ, իսկ կարպետները՝ ոչ: Գորգ բառն առաջին անգամ հիշատակվում է Տավուշի Կապտավանք եկեղեցու պատին եղած արձանագրություններից մեկում (1242-1243 թթ): Հայագետներ Ղափանցյանն ու Ջահուկյանը

գտնում են, որ գորգ բառը պատկանում է խեթերենի բառաֆոնդին, ուր և հիշատակվում է *kurka* ձևով։ Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին ուղղակիորեն գրում է, որ գորգ բառը հայկական ծագում ունի և նշանկում է *-նախշ*։ Մինչդեռ խեթերենի մասնագետ Է. Սարտիվենտն ու Պ. Ժաանը եզրակացնում են, որ խեթերեն *kurka* բառը նշանակում է քուռակ կամ ձիու քնփուշ։

Կարպետ բառն առաջին անգամ հիշատակվում է 5-րդ դարի Ավետարանում՝ գրաբարյան «կապերտ» ձևով։ Դեռևս Հրաչյա Աճառյանն առաջ էր քաշել այն վարկածը, որ կապերտ բառն այլ լեզուներ է անցել հայերենի միջոցով։ Մի շարք այլ լեզվաբաններ նույնպես գտնում են, որ գրաբարյան կապերտ բառը, միջին հայերենում ենթարկվել է հնչյունափոխության (բաղաձայնների դրափոխություն) և անցել այլ եվրոպական լեզուների։ Իսկ Հ. Սուքիասյանը նշում է, որ այս բառը փոխառնվել է հայերենից 13-րդ դարում, քանի որ Կիլիկիայի նավահանգիստներից հայկական գորգերն արտահանվում էին եվրոպական երկրներ։ Այսպիսով, եվրոպական լեզուներն արտացոլում են ոչ թե հայերենի սկզբնական՝ «կապերտ» ձևը, այլ միջին հայերենի «կարպետ» տարբերակը։

Արաբ ժամանակագիրները վկայում են, որ կալի, խալի համ հալի բառը ծագել է Կարին քաղաքի անվանումից, իսկ Կարինը ինքնին արհեստների, հատկապես գորգագործության խոշոր կենտրոն էր։ Արաբներն այն, հարմարեցնելով Կարնո քաղաք անվան հետ, կոչել են Քալիքալա։ Աբդ ար Ռաշիդ ալ Բակուվին գրում է, որ իր գորգերով հայտնի Կարին քաղաքից, որը ռազմավարական դիրք էր զբաղեցնում Պարսկաստան և Եվրոպայի միջև, «արտահանում են քալի կոչվող գորգեր»։ Իսկ 13-րդ դարի արաբ գիտնական Յակուտ ալ Համավին նշում է, որ գորգերը Քալիքալա քաղաքի արաբական կրճատված անվանումից՝ Քալի ձևից ստացել են քալի/ կալի/ խալի անվանումը։

#1

Կարպետանախշերի ծագումը և գաղափարական բովանդակությունը

Դարերի ընթացքում պահպանված ամաններն արտահայտում են հայ ժողովրդի ճաշակը, նրա գեղարվեստական ու ստեղծագործական ինքնատիպությունը: Զարդանկարային ու գունային լուծումները պահպանվել են դարերի ընդացքում: Հիմնական զարդանկարները կրկնվում են ամեն տեղ՝ Վասպուրականից Լոռի, սակայն ամեն դարաշրջանում իրեն հատուկ տարբերակներով: Զարդանկարային նորանոր կառուցվածքներով:

Կարպետի և գորգի զարդանկարներն իրենց բովանդակությամբ առանչվում են հայկական կիրառական արվետի այլ ճյուղերի հետ: Հին կարպետներ չեն պահպանվել, բայց նրանց բազմաթիվ զարդանկարները կարելի է նկատել քարե հուշարձանների, խաչքարերի վրա: Նրանք հաճախ, փոխանցվելով քարից, կենդանանում են, ճկուն ձև ու փայլ ստանում և նոր տեսքով զարդարում կարպետներն ու գորգերը: Քարի գեղարվեստական մշակման և կարպետի նմանություններն ավելի ցայտուն են արտահայտվում խաչքարերի ու կարպետի եզրանախշերի, նրանց բազմաթիվ տարատեսակների մեջ: Դժվար է ասել, թե ով է ում վրա ազդել, կարպետագործը քարագործ վարպետի՞, թե՞ հակառակը:

Կարպետի զարդանկարները նմանություններ ունեն նաև փայտի փորագիր նախշերի հետ: Նույն զարդանախշերը կիրառական արվեստի տարբեր բնագավառներում հանդես են գալիս իրենց բնորոշ տարբերակներով, հարմարեցվում տվյալ իրի գործնական նպատակներից թելադրված կառուցվածքներին, կապված են կոնկրետ իրի գեղարվեստական կերպարի գեղագիտական սկզբունքներին, նյութի և տեխնիկական հնարավորություններին:

Հայկական կարպետի զարդանախշերը երկրաչափական, կենդանական և բուսական են: Կարպետագործության տեխնիկային ավելի բնորոշ է երկրաչափական զարդանախշը: Ամենապարզ ու տարածված զարդանախշը եռանկյունն է: Կարպետագործության զարդանախշերը պարզ գծերից մինչև բարդ ելուստավոր գրաֆիկական կերպարներն են ընդգրկում՝ եռանկյունիներ, քառակուսիներ, բարդ հորինվածքներ ունեցող վարդակներ:

Խաչը հայ մշակույթի բազմաբնույթ ստեղծագործություններում լայն տարածում ստացած զարդանախշ է: Իհարկե, նախնական ձևը հավասարաթև խաչի պատկերն է եղել: Այն տիպական էր հեթանոսական մշակույթի զանազան բնագավառներում իբրև զարդանախշ, որը խորհրդանիշն էր աշխարհի նյութականությունը կազմող չորս տարրերի՝ օդի, ջրի, հողի, կրակի: Այս զարդանախշին հանդիպում ենք շատ ժողովուրդների մոտ, ուսումնասիրողների մի խումբ խաչը դիտարկում է որպես արևի սիմվոլ, չորս տարրերի՝ բնության չորս ուժերի գաղափար, որը և դրված է քրիստոնեություն հիմքում: Հնագույն խաչանախշը մեզ է հասել և՛ առանձին

պատկերով (հավասարաթև խաչ), և՛ շրջանակի մեջ, որը, հավանաբար, հենց երկրագնդի պատկերներն է հանդիսանում:

Կարպետների տեսակները

Կարպետները և կարպետագործ իրերը գործվում են տարբեր տեխնիկայով: Ըստ այդ հատկանիշի՝ նրանք պայմանականորեն բաժանվում են յոթ խմբի՝

- Մեզար
- Ջեջիմ
- Երկու երեսանի կարպետ
- Շուլալ կարպետ
- Ուղիղ օղաճիտ
- Փաթաթովի կարպետ
- Թեք օղաճիտ փաթաթովի կարպետ
- Ծոպավոր կարպետ

Մեզարը՝ ամենապարզ գործվածքն է, ոստայնկանությունից անցում կարպետագործության: Այն գործվում է կտավի պես, գործող թելը մեկընդմեջ անցնում է հենքի թելիերի միջով, ստացվում է երկու երեսից հարթ, նույնանման գործվածք, ուր երևում են և՛ գործող, և՛ հենքի թելերը: Այս տեխնիկայով հնարավոր է ստանալ նեղ ու լայն շերտերով հյուսվածքներ:

Մեզարը հինում են գունավոր թելերով, միմյնաց հաջորդող նեղ ու լայն շերտերով՝ վերից վար, որոշակի հաջորդականությամբ: Շերտերի արանքներում տեղադրվում են տարբեր գույների բաժանարար գծեր: Մի շարք մեզարներ հյուսված են երեք գույնի՝ կարմիր, հողագույն և շագանակագույն թելերից ու բաժանարար մուգ գիծ – շերտերից: Այդ երեք գույնի հենքի թելերը հաջորդաբար 10սմ լայնության շերտերով կրկնվում են մեզարի ամբողջ լայնությամբ: Գործող կարմիր թելը հենքի կարմիր թելի հետ ձևավորում է կարմիր քառակուսին, իսկ հաջորդների հետ՝ խառը գույների: Հողագույն գործող թելը հողագույնի հետ առաջացնում է հողագույն քառակուսի, մյուսների հետ՝ խառը և այլն: Հետո անցնում են բաժանարար մուգ գույնի մի քանի առանձին թելեր, որոնք հենքի նման թելերի հետ առաջացնում են վանդակ-շրջանակ այդ քառակուսիների համար:

Երբեմն կարմիր, կանաչ, կապույտ թելերով հյուսում էին եզրերը, իսկ դաշտը մեծ մասամբ միագույն էր լինում: Օժիտի գունագեղ մեզարները երկու ծայրերից ունենում էին օգտագործված թելերի երկար հյուսքեր, փափուկ փնջեր:

Ջեջիմի՝ ամենաբնորոշ առանձնահատկությունը նրա գունավոր-շերտավոր լինելն է: Դրանք գործում են և՛ լայնությամբ, և՛ երկարությամբ: Սա նույնպես երկերես գործվածք է վերջակետ, բոլոր գործվածքների մեջ թերևս ջեջիմն է պահպանել գործելու նախնադարյան ձև: Այն գործում են ջուլհակագործության հնագույն, ամենապարզ եղանակով՝ գետնին խփված ցցերի միջև արված հենքի վրա: Գործող թելն անցկացնում են հենքով՝ ձախից աջ և աջից ձախ, ապա փայտե թրով նստեցնում: Ստացվում են ներդաշնակ գունավոր շերտեր: Ջեջիմի շերտերը գեղեցիկ են և առանց նախշերի, սակայն ավելի գեղեցիկ ու արտահայտիչ են այն ջեջիմները, որոնց շերտերի վրա գործված են նախշեր:

Նախշերը ոճավորված են երկրաչափական և մշակված նեղ շերտի վրա դեղադրելու համար: Զարդերի շարքում հանդիպու են՝ խաչերի, եղանի, S տառաձևերի, քառակուսիների, հասարակ գործիքների, գազանների, մարդկային պատկերներ: Ջեջիմը գործում են նաև խաչաձև, սանրաձև և այլ նախշերով: Սևանի ավազանում այսպիսի ասացվածք կար՝ *«Մենք յոթ գույնի ջեջիմ կ գործեինք»:*

Երկուերեսանի՝ երկու երեսանի (մատնաքաշ) կարպետն ամենակարևոր գործվածքն է, որից և այդ բնագավառն ստացել է իր անվանումը: Կարպետի հենքն արվում էր խավավոր գորգի նման, հիմնականում ուղղահայաց տորքի վրա: Սկզբնական շրջանում հենքը բրդյա թելերով էր արվում, ավելի ուշ՝ բամբակյա: Հենքի թելերի միջով անցնում են հիմնական գործող թելերը, որոնք ամրացնում եմ կտուտիչով: Կարպետ գործում են երկու եղանակով: Առաջինն այն է, երբ գործվածքը սկսում են մի ծայրից և ավարտում կարպետի վերջում: Երկրորդ եղանակով նախշերը գործում են կարպետի համապատասխան մասերում, որից հետո ազատ տարածությունն՝ տափը, լցնում են միագույն թելերով: Երկու դեպքերում էլ թելերն ամրացննում են եզրերին, իսկ հետ գալիս ամրացնում են տվյալ կետի հենքի թելի վրա: Դրա շնորհիվ առաջանում են փոքրիկ անցքեր (փոխ, թոռակ, չաթ), որոնք նույնպես ներգրավվում են կարպետի ընդհանուր հարդարանքի մեջ:

Շուլալ՝ կարպետի նախշերը գորգի նման արվում են փափուկ թելերով: Անվանումը գալիս է գործելու տեխնիկայից: Գործող նախշը ձևավորվում է հորիզոնական գծերով, հենքի միջով անցնում է շուլալ կարի պես ծածկում է հնեքի մի քանի թելը, ապա անցնում քարպետի տակի կողմը, որոշ տարածությունից հետո նորից դուրս է գալիս կարպետու երեսը, դարձյալ վերցնում են միքանի թել և անցնում տակի կողմը: Կարպետի տակի կողմից երևում է նախշի բացասական

ձևը: Նախշ ձևավորելիս գործող թելի ծայրերը կարպետի հետևի կողմում թողնում են կախված: Ավարտելուց հետո տակից կապում են կարի հանգույցով: Շուլալ կարպետի և՛ նախշերը, և՛ տափը (դաշտը) միասին են գործվում, շարք շարքի հետևից: Գործողը պետք է ունենա հաշվելու, նախշը դուրս բերելու հմտություն, նաև փորձ, աչքաչափ, ճաշակ:

Ուղղիղ օղաճիտ փաթաթովի կարպետում՝ գործող գունավոր թելը փաթաթվում է հենքի մեկ կամ երկու թելի շուրջը, օղակաձև «ճիտ է անում», փաթաթվում, անցնում աջ, ապա պտտվում հենքի հաջորդ մեկ կամ երկու թելերի շուրջը և այսպես մինչև շարքի վերջը: Շարքն ավարտելուց հետո անցնում է միջնաթելը և ամուր կտուտվում-ամրացվում: Հենքի թելը և միջնաթելերը չեն երևվում, թաքնվում են գործվածքի մեջ այս տեխնիկայով գործվածքի դեպքում գործող թելն ուղիղ գծով է տեղադրվում, իսկ երբ հաջորդ շարքում վրայից նույն գույնի թել է անցնում, ստացվում են մանր քառակուսիներ: Դիտողին թվում է, թե ուղիղ համրովի հարթակար ասեղնագործություն է: Գործվածքի հետևում գործող թելը թեք-թեք է նստում:

Օգտագործվող նյութերն ու գործիքները

Իր գոյության հազարամյակների ընթացքում մարդկությունը թելեր ու գործիքներ է հյուսել թե՛ կենդանական՝ բուրդ, մետաքս, և թե՛ բուսական՝ բամբակ, վուշ ծագում ունեցող հունմքից: Հայկական լեռնաշխարհում կային կարպետագործության զարգացման համար

անհրաժեշտ բոլոր նպաստավոր պայմանները՝ բուրդը, բամբակը, վուշը, մետաքսը, դրանք մշակելու և օգտագործելու կուլտուրան:

Ինչպես անցյալում այնպես էլ ներկայում կարպետագործների և գորգագործների հիմնական աշխատանքային գործիքներն էին՝ տորքը (դազգահ), մկրատը, կտուտը, դանակը և փոքր սանրը, իսկ հումքի վերամշակնման համար՝ սանդերքը, անեղը, ճախարակը և իլիկը: Այդ գործիքները ժամանակի ընթացքում ավելի ու ավելի են հղկվել, կատարելագործվել: Օրինակ՝ գորգագործական տորքը միշտ չէ, որ այժմյան ուղղահայաց ձևն է ունեցել: Սկզբում այն եղել է հորիզոնական, որը կոչվում էր «գետնագործ» կամ «տափի գործ»: Կարպետագործության համար օգտագործվել է ոչխարի, ուղտի բուրդ, բամբակ, մետաքս: Հայերը շատ վաղուց ծանոթ են եղել բամբակի մշակմանը: Ոստայնանկության մեջ էժանագին բամբակը փոխարինել է բրդին, վուշին, մետաքսին: Կարպետների մեջ նախշերը բամբակյա թելով են գործում այն դեպքում, երբ ցանկանում են սպիտակ նախշերը երկար ժամանակ վառ պահել: Բուրդը ժամանակի ընթացքում մի փոքր դեղնում է՝ ընդունելով փղոսկրի գույն: Բամբակը չի փոխում իր գույնը, երանգը, այդ պատճառով էլ օժիտի կարպետագործ իրերի մեջ մասամբ օգտագործվել է բամբակյա թել:

Վերջին ժամանակներում կարպետի նաև գորգի հենքը հինում են բամբակյա թելով: Հին կարպետները, որոնց և՛ հենքը, և՛ զարդանախշերը բրդյա թելերով են արված, ավելի փափուկ ու ճկուն են, քան բամբակահենք կարպետները: Կարպետագործության մեջ օգտագործվում է երկու տեսակի թել՝ հենքի թել և գործող (երկտակ, երեքտակ) թել: Երկուսն էլ լավ ոլորված են: Միայն կարպետի մի տեսակում, որը շուլալ է կոչվում, նախշերը գորգի նման գործում են փափուկ թելով, մեկտակ (հին գորգերի խավի թելը երկտակ է):

Անցյալում բրդի մշակման, կարպետագործության հետ կապված բոլոր աշխատանքները կատարվել են ձեռքով, պարզ գործիքների օգնությամբ: Ոչխարի բրդի խուզը կատարվել է տղամարդու ձեռքով:

Բուրդը զզել են աղեղով, սանդերքով: Աղեղն աղեղնաձև փայտե ծայրերից ձիգ կապած ոչխարի աղիքից պատրաստված թել-լար: Բուրդը, բամբակը դնում են աղեղի առաջ, լարի մոտ և թակով խփում են լարին, զզում են:

Գզելու ընթացքում, տեղի է ունեցել ընկերական փոխադարձ օգնություն՝ «մաջի», տասից-տասնհինգ աղջիկ էին հավաքվում, իսկ այդ ժամանակ տան մեծահասակ կինը բուրդը բաժանում եր հավասար մասերի: Թակը կլորագլուխ փայտ է՝ պոչով:

Սանդերքը փայտյե գործիք է, որի գագաթին երկու շարքով շարված են մետաղյա ատամներ: Սանդերքով զզած բուրդն ավելի մաքուր է: Սանդերքով զզելուց հետո ստացված

բուրդը կոչվում էր մալանչ, փաթիլ, սմբակ, ոստ—ոզիր: Գզելուն ու սանրելուն հաջորդում էին մանումն ու ոլորումը: Գզած բուրդը մանում էին ճախարակով կամ իլիկով:

Լեռնային Հայաստանում կարպետի և գորգի բուրդը մանում էին միայն ճախարակով որը կոչվում էր ջահրա, ճահրա, չըխրակ: Ճախարակը կազմված էր թեք թեք ոտքերով պատվանդանի վրա ամրացված առանցքակալից, դրա միջով անցնող միմյանց վրա խաչաձև դրված ութաձև բարակ տախտատակներով թևերից, ու թելը փաթաթող իլիկից: Ճախարակով մանում էին ցանկացած հաստության և ոլորման աստիճանի թել: Հայաստանում որպես թել մանելու ձեռքի պարզունակ գործիք օգտագործվել է իլիկը (թեշի, թեշիկ, ռոկ): Այն բաղկացած էր 25-35սմ երկարությամբ ձողիկից, որի վրա փաթաթվում էր մանվող թելը, ձողիկի վրա ամրացվող կոնաձև կամ գլանաձև գլխիկից և թելն ամրացնելու մետաղյա կեռիկից (ծիծեռ, ծընեռք):

Իլիկը Հայաստանում հայտնի էր դեռևս Ք.ա. III-րդ հազարամյակից: Իլիկի ոսկրե, քարե կամ կավե գլխիկներն են հայտնաբերվել Հայաստանի Էնեոլիթյան և բրոնզե դարյան համարյա բոլոր բնակատեղիներում (Շենգավիթ, Արթիկ, Լճաշեն, Գառնի և այլն): Վասպուրականում, Սասունում մանողն աջ ազդրի վրա կապում էր կաշվե կտոր, որին քսելով թեիշին՝ պտտեցնում էր, և թելը մանում: Թելը մանելուղ հետո մշակում էին վայրի, թթու պտուղների հյութով կամ հանքային նյութերով (արծնում), այնուհետև ներկում էին բուսական, կենդանական և հանքային ներկերով: Ներկելուց հետո թելը չորացնում էին արևի տակ, լվանում և մերսում կավի մեզով: Կարպետները գործում էին տորքի վրա: Հենքի ուղղաձիգ միագույն թելերի միջով անցկացնում էին գունավոր միջնաթելեր, որոնցով և ստացվում էր կարպետի նախշը: Յուրաքանչյուր շարքն ավարտելուց հետո թելերը խտացնում էին կտուտիչով: Գործվածքը հինելու ամենանախնական ձևն այն էր, երբ գետնին միմյանցից որոշ հեռավորության վրա, հողի մեջ խրում էին փայտե ցցեր, եղաններ, նրանց արանքներում, գետնին զուգահեռ, հորիզոնական ուղղությամբ:

Կարպետ գործելու տեխնիկան/քայլաշարը

Ծանոթանանք երկուերեսանի կարպետ հյուսելու ընթացքին, որը շատ պարզ է: Այս տեխնիկայով կարելի է հյուսել գեղեցիկ, նախշազարդ, տարբեր չափերի կարպետներ, պայուսակներ, դրամաքսակներ, ակնոց ամաններ, հանդերձանքը լրացնող գեղեցիկ և նախշազարդ գոտիներ: Հյուսելու համար անհրաժեշտ է քառակուսի կամ ուղղանկյուն փայտե

շրջանակ 10×15-ից մինչև 80×100 սմ չափերի:Հինելու համար վերցնել ուղղանկյուն կամ քառակուսի շրջանակ, գամել:

17-րդ դարի հայկական գորգերը մեծապես պատկերվել է նաև կերպարվեստում, ինչպես օրինակ, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու բարձրաքանդակներում և միջնադարյան հայկական մանրանկարչության մեջ: Հաճախ գորգերի և տեքստիլի փոքր պատառիկներն օգտագործվում էին մատյաններ կազմելու համար: Հենց այս պատճառով է, որ այսօր մեզ են հասել այդպիսի մի քանի հազար պատառիկներ:

Հայկական մանրանկարչությունում և որմնանկարներում հաճախ կարելի է հանդիպել Աստվածամորը, Քրիստոսին, ավետարանիչների և սրբերի՝ պատկերված գորգերով, բարձերով կամ ձեռագործ ծածկոցներով: Եկեղեցու խորանները, խաչքարների բարդ հյուսվածքները, միջնադարյան հայկական ձեռագրերում հանդիպող վարդյակները կրկնում են գորգերի և կարպետների զարդանախշերը: Հայկական գորգեր պատկերվել են նաև 13-14-րդ դարի եկեղեցիների շքամուտքերին:

Գորգերի և կարպետների մասին բազմաթիվ հիշատակություններ են պահպանվում հայկական բանավոր ավանդազրույցներում, հեքիաթներում, երգերում և Սասունցի Դավիթ էպոսում: Այսպես օրինակ, «Անահիտ» հեքիաթի հերոսուհին ասում է, որ կհամաձայնի ամուսնանալ արքայազնի հետ այն պայմանով, որ նա սովորեցնի իրեն որևէ արհեստ՝ նախապատվությունը տալով գորգագործությանը: Ղարաբաղում պատմվող մի հայկական

ավանդազրույցի համաձայն՝ սատանան սովորեցրել է մարդկանց զբաղվել գորգագործությամբ, որպեսզի գայթակղի նրանց շքեղությամբ և նյերգրավի ծանր աշխատանքի մեջ:

Հայկական գորգերի պատկերումներ կարելի է հանդիպել նաև եվրոպական գեղանկարչության մեջ, ուր այն պատկերվել է սկսած Վերածննդի դարաշրջանից՝ դեռևս 13-14-րդ դդ.:

Հայկական գորգը կերպարվեստում

17-րդ դարի հայկական գորգերը մեծապես պատկերվել է նաև կերպարվեստում, ինչպես օրինակ, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու բարձրաքանդակներում և միջնադարյան հայկական մանրանկարչության մեջ: Հաճախ գորգերի և տեքստիլի փոքր պատառիկներն օգտագործվում էին մատյաններ կազմելու համար: Հենց այս պատճառով է, որ այսօր մեզ են հասել այդպիսի մի քանի հազար պատառիկներ:

Հայկական մանրանկարչությունում և որմնանկարներում հաճախ կարելի է հանդիպել Աստվածամորը, Քրիստոսին, ավետարանիչների և սրբերի՝ պատկերված գորգերով, բարձերով կամ ձեռագործ ծածկոցներով: Եկեղեցու խորանները, խաչքարների բարդ հյուսվածքները, միջնադարյան հայկական ձեռագրերում հանդիպող վարդյակները կրկնում են գորգերի և կարպետների զարդանախշերը: Հայկական գորգեր պատկերվել են նաև 13-14-րդ դարի եկեղեցիների շքամուտքերին:

Գորգերի և կարպետների մասին բազմաթիվ հիշատակություններ են պահպանվում հայկական բանավոր ավանդազրույցներում, հեքիաթներում, երգերում և Սասունցի Դավիթ էպոսում:

Գորգագործությունն այսօր

Ներկայումս գորգագործության կենտրոններ են շարունակում մնալ Սյունիքն ու Արցախը: Հատկանշական է, որ 2013 թ. Շուշիում բացվեց Հայաստանի տարածքում գործող միակ գորգերի թանգարանը, որտեղ ցուցադրվել են թանգարանի հիմնադիր Վարդան Ասծատրյանի գորգերի անհատական հավաքածուն:

Շուշիի գորգերի թանգարանի ցուցանմուշների մի մասը 2020 թվականի Արցախյան պատերազմում Շուշիի անկումից մի քանի օր առաջ տարհանվել է Երևան և ժամանակավոր

հանգրվան գտել Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում:

2017 թվականին Երևանում հիմնադրվել է «Հայկական գորգի ազգային կենտրոնը»: «Կենտրոնի առաքելությունն է հանրահռչակել հայկական գորգարվեստի բազմադարյան պատմությունը, ստեղծել «Հայկական գորգ» բրենդը և ապահովել դրա ճանաչելիությունն ամբողջ աշխարհում»:

Հայաստանում և արտերկրում գոյություն ունեցող թանգարաններից բացի, հայկական գորգերը պահվում են անհատական հավաքածուներում, որոնց թիվը, ցավոք, հայտնի չէ:

Եզրակացություն

Ներկայումս գորգագործության կենտրոններ են շարունակում մնալ Սյունիքն ու Արցախը: Հատկանշական է, որ 2013 թ. Շուշիում բացվեց Հայաստանի տարածքում գործող միակ գորգերի թանգարանը, որտեղ ցուցադրվել են թանգարանի հիմնադիր Վարդան Ասծատրյանի գորգերի անհատական հավաքածուն:

2017 թվականին Երևանում հիմնադրվել է «Հայկական գորգի ազգային կենտրոնը»: «Կենտրոնի առաքելությունն է հանրահռչակել հայկական գորգարվեստի բազմադարյան պատմությունը, ստեղծել «Հայկական գորգ» բրենդը և ապահովել դրա ճանաչելիությունն ամբողջ աշխարհում»:

Հայտնի գորգագործական ընկերություններն են *«Թուֆենկյան Թրանս Կավկազուս», «Մեգերյան կարպետ», «Ղարաբաղ կարպետ», «Միդա Սիմոնյան»:*

Հայաստանում և արտերկրում գոյություն ունեցող թանգարաններից բացի, հայկական գորգերը պահվում են անհատական հավաքածուներում, որոնց թիվը, ցավոք, հայտնի չէ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աշխունջ Պողոսյան. Հայոց կարպետագործության մշակույթը. Երևան, 2003 թ.
2. Մելանյա Բալայան, «Արցախի գորգագործական մշակույթի ուսումնասիրման հարցի շուրջ», հայկական գորգարվեստի ավանդույթները
3. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատոր Բ, Երևան, 1973, էջ 523-524
4. Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, 1961, Երևան, Գ. Ջահուկյան, «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան», 1987, Երևան
5. Ա. Սուքիասյան, «Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն», Երևան, 1978, էջ 100
6. ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների։ Թիվ 11, 1952 թ։ էջեր 99–116
7. Կ. Պապիկյան, «Հայկական կարպետներ և գորգեր», 2009թ., Երևան։